

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ՝ ՊԱՇՏՈՆՆԵՐՈՒՄ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ

**Յ. Յ. ՀԱՎՈՐՅԱՆ**

*Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
ՀՀ Սփյուռքի նախարար,  
ԳԴՀ խորհրդի նախագահ*

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը՝ որպես պետական իշխանության բարձրագույն ներկայացուցչական և օրենսդիր մարմին, օժտված է առանցքային պաշտոններում նշանակումներ կատարելու լիազորությամբ: Այս լիազորությունը սահմանադրորեն ամրագրված է որպես հակակշիռ Հանրապետության Նախագահին, որպեսզի լիազորությունների կենտրոնացում չլինի մեկ մարմնում, ինչպես նաև՝ այդ պաշտոնյաները սահմանադրական պատասխանատվություն կրեն և հաշվետու լինեն պառլամենտի առջև: Ազգային ժողովի պատգամավորների ակտիվ մասնակցությամբ ձևավորվում են պետական որոշակի ինստիտուտներ և անկախ մարմիններ, նշանակվում են դրանց ղեկավարները: Գործող Սահմանադրության համաձայն՝

ա) Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի առաջարկությամբ հաստատում է՝

- Կենտրոնական բանկի նախագահին,
- Վերահսկիչ պալատի նախագահին,
- Գլխավոր դատախազին,

բ) Ազգային ժողովն իր նախագահի առաջարկությամբ նշանակում է՝

- Սահմանադրական դատարանի հինգ անդամ,
- պատգամավորների 1/5-րդի առաջարկությամբ և Ազգային ժողովի

անդամների 3/5-րդի համաձայնությամբ ընտրում է Մարդու իրավունքների պաշտպանին,

• ընտրում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունն ու բազմակարծությունն ապահովող կարգավորող անկախ մարմնի անդամների կեսին,

- ընտրում է Արդարադատության խորհրդի երկու իրավաբան-գիտնականներին:

**Անդրադառնանք ՀՀ կենտրոնական բանկի նախագահի նշանակելու լիազորությանը:** Նկատի ունենալով Կենտրոնական բանկի գործառույթները, նրա նշանակությունը երկրի ֆինանսական, տնտեսական զարգացման գործում՝ Կենտրոնական բանկի նախագահի պաշտոնը Սահմանադրությամբ ամրագրված և ներկայացուցչական մարմնի կողմից նշանակվող պաշտոն է: Այսպես. ՀՀ Սահմանադրության 83.3-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված է, որ «Կենտրոնական բանկի նախագահը նշանակվում է Հանրապետության Նախագահի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի կողմից՝ վեց տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել կենտրոնական բանկի նախագահ»:

Կենտրոնական բանկի նախագահը և նրա տեղակալը չեն կարող լինել որևէ կուսակցության ղեկավար մարմնի անդամ, զբաղվել քաղաքական գործունեությամբ, զբաղեցնել պետական այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի զիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից<sup>1</sup>: Պետական իշխանության ծյուղերի միջև հավասարակշռության կառուցակարգը պահպանելու համար ամրագրված է նաև, որ կենտրոնական բանկի նախագահի թեկնածությունն առաջարկում է Հանրապետության Նախագահը: Այդպիսի լիազորություն ունի նաև Ռուսաստանի Դաշնության Նախագահը, որը կենտրոնական բանկի նախագահի թեկնածությունը ներկայացնում է Ռուսաստանի Դաշնության Պետական Դումային (Սահմանադրության 103-րդ հոդված)<sup>2</sup>:

1995 թ. հուլիսի 5-ին ՀՀ Սահմանադրության ընդունումից հետո, երբ Կենտրոնական բանկի նախագահի նշանակումն ամրագրվեց սահմանադրորեն, 1996 թ. հունիսի 30-ին ընդունվեց «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը: Օրենքում ոչ միայն սահմանվում են ՀՀ կենտրոնական բանկի իրավասությունները, խնդիրները, պետական մարմինների հետ համագործակցության ուղղությունները, ֆինանսական դրույթներ, այլև ամրագրվում է Կենտրոնական բանկի կառավարման կառուցակարգը: Օրենքի 18-րդ հոդվածում ամրագրված է, որ Կենտրոնական բանկի նախագահը Կենտրոնական բանկի բարձրագույն պաշտոնատար անձն է: Նա պատասխանատու է օրենքով սահմանված Կենտրոնական բանկի խնդիրների լուծման համար: Կենտրոնական

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999 թթ.), Գիրք Ա, Երևան, 1999, էջ 405-406:

<sup>2</sup> Տե՛ս **Авакьян С. А.** Федеральное Собрание – Парламент России, М., 1999, էջ 111:

բանկի նախագահի բացակայության կամ պաշտոնական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նրան փոխարինում է տեղակալը, իսկ վերջինիս բացակայության կամ պաշտոնական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում՝ Կենտրոնական բանկի խորհրդի տարիքով ավագ անդամը:

Սակայն ՀՀ կենտրոնական բանկի նախագահի նշանակման հարցում կան էական բացեր, որոնք հարկ է լրացնել ՀՀ-ում կայանալիք սահմանադրական բարեփոխումների ընթացքում: Այսպես, հնարավոր է, որ Ազգային ժողովը չհաստատի ՀՀ Նախագահի առաջարկած՝ Կենտրոնական բանկի նախագահի թեկնածուին: Սրան հաջորդող քայլը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարգավորված չէ: Կամ՝ 1995 թ. Սահմանադրությամբ միայն խոսք էր գնում պաշտոնում նշանակման մասին, և կարգավորված չէր պաշտոնակության հարցը: 2005 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում ամրագրվեց, որ «Օրենքով սահմանված դեպքերում Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ծայների մեծամասնությամբ Հանրապետության Նախագահի առաջարկությամբ կարող է պաշտոնանկ անել Կենտրոնական բանկի նախագահին» (83.3-րդ հոդվածի 5-րդ մաս):

Այս գործընթացը մի շարք երկրներում նույնպես ստացել է սահմանադրական կարգավորվում. օրինակ, Ուկրաինայի Հանրապետության Սահմանադրության 85-րդ հոդվածի 18-րդ կետի համաձայն՝ Կենտրոնական բանկի նախագահին նշանակում և ազատում է Գերագույն Ռադան՝ Հանրապետության Նախագահի առաջադրմամբ<sup>3</sup>: Ադրբեջանի Հանրապետության Սահմանադրության 103-րդ հոդվածի 15-րդ կետի համաձայն՝ Կենտրոնական բանկի նախագահը Հանրապետության Նախագահի առաջարկությամբ նշանակվում և ազատվում է պառլամենտի կողմից<sup>4</sup>: Իսկ Լիտվայի Սահմանադրության 67-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ Սեյմն է նշանակում և ազատում Կենտրոնական բանկի նախագահին<sup>5</sup>:

Հետաքրքրական է, որ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ Կենտրոնական բանկի խորհրդի կազմում պառլամենտն առաջադրում է երկու անձ. «Կանոնակարգի 172-րդ հոդվածի համաձայն՝ խորհրդի անդամների թեկնածություններն առաջադրում են Պետական Դումայի պատգամավորները: Համաձայն Կենտրոնական բանկի մասին օրենքի՝ Պետական Դուման տարվա մեջ երկու անգամ լսում է Կենտրոնական բանկի նախագահի զեկուցումը

<sup>3</sup> Ст. 1 Конституции стран - членов СНГ, Ереван, 1997, т. 70:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 254:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 165:

դրամավարկային քաղաքականության հիմնական ուղղությունների, ինչպես նաև կատարած աշխատանքների մասին»<sup>6</sup>:

Հայաստանի Հանրապետությունում օրենսդրորեն սահմանվում են Կենտրոնական բանկի նախագահին ազատելու հիմքերը:

ՀՀ Կենտրոնական բանկի կառավարման բարձրագույն մարմինը բանկի խորհուրդն է, որը բաղկացած է յոթ հոգուց: Դրա կազմի մեջ մտնում են նաև բանկի նախագահը և տեղակալը: Խորհրդի անդամներին, ի տարբերություն մի շարք երկրների, նշանակում է Հանրապետության Նախագահը: Օրենքը խորհրդի անդամներին առաջադրում է մասնագիտական պահանջներ, ինչպես նաև սահմանափակումներ են դրված այն անձանց նկատմամբ, ովքեր դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ են ճանաչվել, դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատապարտվել են օրինական ուժի մեջ մտած դատավճռով կամ գրկվել են որոշակի պաշտոն վարելու իրավունքից: Հատկանշական է, որ խորհրդի անդամները չեն կարող զբաղեցնել պետական այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Նրանք նաև չեն կարող Կենտրոնական բանկում այլ պաշտոններ զբաղեցնել<sup>7</sup>:

ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված են Կենտրոնական բանկի խնդիրները: Գների կայունության ապահովման նպատակով Կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրեր: Սահմանադրորեն ամրագրվել է նորմ այդ կարևոր մարմնի անկախության մասին, ինչպես նաև հիմնական օրենքում նախատեսված է Կենտրոնական բանկի՝ Հանրապետության արժույթի թղարկման գործառույթը (83.3-րդ հոդված):

**Կարևոր է նաև Ազգային ժողովի կողմից Վերահսկիչ պալատի նախագահի նշանակման լիազորությունը:** Ներկայացուցչական մարմինը, որը ձևավորվում է անմիջապես ժողովրդի կողմից, ստանում է նրա մանդատը և իրականացնում ներկայացուցչական ժողովրդաիշխանություն, միաժամանակ, ունի վերահսկողական գործառույթ իրականացնող մարմնի ղեկավարի նշանակման իրավասություն: Տարբեր երկրներում պառլամենտը վերահսկողություն է իրականացնում հանձնաժողովների, հսկիչ-վերահսկիչ մարմինների, քննչական, վերստուգիչ հանձնաժողովների, վերահսկիչ պալատների և այլ կառույց-

<sup>6</sup> Տե՛ս **Авакьян С. А.** Федеральное Собрание – Парламент России, М., 1999, էջ 112:

<sup>7</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999 թթ.), Գիրք Ա, Երևան, 1999, էջ 406-407:

ների միջոցով: Հայաստանի Հանրապետությունում այդ գործառույթը կատարում էր Ազգային ժողովի Վերահսկիչ պալատը, որը 2005 թվականի սահմանադրական բարեփոխումների շնորհիվ ստացավ անկախ սահմանադրական մարմնի կարգավիճակ՝ միաժամանակ, պարտավորվելով հաշվետվությամբ հանդես գալ Ազգային ժողովի առջև՝ կրելով սահմանադրական պատասխանատվություն:

ՀՀ Սահմանադրության 83.4-րդ հոդվածը ոչ միայն սահմանում է ՀՀ Ազգային ժողովի կողմից վերահսկիչ պալատի նախագահի նշանակման լիազորությունը, այլև նախատեսում է, որ այն ոչ թե Ազգային ժողովի մարմին է, այլ վերահսկողություն իրականացնող անկախ ինստիտուտ, որը չի կարող ծառայել որևէ մեկին՝ «պատվեր» կատարելու համար: 1996 թվականին ընդունվել է «ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» օրենքը, որը դադարեցրել է գործողությունը և ուժի մեջ է մտել 2006 թվականի դեկտեմբերի 25-ին ընդունված օրենքը:

Վերահսկիչ պալատի գործունեության ծրագիրը, ինչպես նաև տարեկան մեկ անգամ վերահսկողական աշխատանքների արդյունքների հաշվետվությունը հաստատում է Ազգային ժողովը:

Վերահսկիչ պալատի աշխատանքները կազմակերպում և ղեկավարում է նրա նախագահը, վերջինիս բացակայության դեպքում՝ տեղակալը:

ՀՀ օրենսդրությունը վերահսկիչ պալատին հնարավորություն է ընձեռում օբյեկտիվ վերահսկողություն իրականացնել բյուջետային միջոցների և պետական ու համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ:

Կարևորում ենք համայնքային սեփականության նկատմամբ վերահսկիչ պալատի կողմից վերահսկողության իրականացման մասին սահմանադրական դրույթը: Հաճախ համայնքապետ է ընտրվում գյուղում առավել մեծ ընտանիքի ներկայացուցիչը՝ չունենալով անհրաժեշտ պատրաստվածություն, կառավարման փորձ, պատշաճ ունակություններ: Համայնքի ավագանին էլ ոչ միշտ է ի վիճակի վերահսկողություն իրականացնել համայնքապետի գործունեության, տեղական բյուջեի մուտքերի և ելքերի, համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ, ինչը կարող է լուրջ խնդիրներ հարուցել<sup>8</sup>: Վերահսկիչ պալատի գործունեության արդյունքում բարձրանում է տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվությունը: Միաժամանակ պետք է ձեռնարկել միջոցառումներ՝ ընտրված համայնքապետե-

<sup>8</sup> Մամրամասն տես **Հակոբյան Հ. Հ.**, Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիայի դրույթների արտացոլումը ՀՀ օրենսդրության մեջ // «Օրենք և իրականություն», 2002, N 20, հոկտեմբեր, էջ 6-9:

րին վերապատրաստելու, նրանց օրենքներին ու իրենց խնդիրներին ծանոթացնելու, կառավարման հմտություններ փոխանցելու նպատակով, ինչպես նաև ջանքեր գործադրել համայնքի ավագանու ինստիտուտի կայացման, քաղաքացիական հասարակության ձևավորման ուղղությամբ: ՀՀ Ազգային ժողովը, հաստատելով Վերահսկիչ պալատի ծրագիրը, լսելով նրա հաշվետվությունը վերահսկողական աշխատանքների արդյունքների մասին, նպաստում է պետական և համայնքային մարմինների պատշաճ գործունեությանը՝ Սահմանադրությանն ու օրենքներին համապատասխան:

Վերահսկիչ կամ հաշվիչ պալատի նախագահի նշանակման խնդիրը տարբեր երկրներում տարբեր կերպ է լուծվում. այսպես, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 103-րդ հոդվածով նախատեսված է, որ հաշվիչ պալատի նախագահին նշանակում և ազատում է Պետական Դուման<sup>9</sup>: Հետաքրքրական է, որ պալատի նախագահի թեկնածությունն առաջադրում են Պետական Դումայի կոմիտեները, որոնք զբաղվում են բյուջետային, հարկային, բանկային և ֆինանսական խնդիրներով: ՌԴ-ի Պետական Դումայում կա նաև աուդիտորների նշանակման ինստիտուտ, որը չկա Հայաստանի Հանրապետությունում: Տասներկու աուդիտորներից վեցին նշանակում է Պետական Դուման: Մանրամասն կանոնակարգված են նաև այն դեպքերը, երբ Դումայում այս կամ այն թեկնածուն չի ստանում անհրաժեշտ ձայներ կամ արտահերթ փոփոխություն է կատարվում<sup>10</sup>: Մի շարք երկրների (Ավստրիա, Բելգիա, Պորտուգալիա, Ֆրանսիա և այլն) պառլամենտները մույնպես մասնակցում են վերահսկողություն իրականացնող մարմնի ոչ միայն ղեկավար կազմի, այլև անդամների, վերահսկիչների, աուդիտորների նշանակմանը: Այսպես, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում Բունդեսբազն է նշանակում վերահսկողություն իրականացնող մարմնի բոլոր անդամներին:

ՀՀ վերահսկիչ պալատի նախագահը նշանակվում է Հանրապետության Նախագահի առաջարկությամբ Ազգային ժողովի կողմից՝ վեց տարի ժամկետով: Այս ժամկետով նախագահի նշանակումը կարևորվում է այն տեսակետից, որ ապահովվում է պալատի և նրա նախագահի անկախությունը, քանի որ վերահսկողություն իրականացնող մարմնի գործունեությունը չի համընկնում Ազգային ժողովի և ՀՀ Նախագահի ընտրման պարբերականության (հինգ տարվա) հետ: Օրենքը նաև սահմանում է այն դեպքերը, երբ Վերահսկիչ պա-

<sup>9</sup> Ст. 9 Конституции стран - членов СНГ, Ереван, 1997, т. 36:

<sup>10</sup> Ст. 10 **Авакьян С. А.** Федеральное Собрание – Парламент России, М., 1999, т. 113-115:

լատի նախագահի լիազորությունները Ազգային ժողովի որոշմամբ վաղաժամ- կետ դադարեցվում են.

ա) Վերահսկիչ պալատի նախագահի հրաժարականի դեպքում,

բ) Վերահսկիչ պալատի նախագահի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարելու կամ օտարերկրյա քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում,

գ) Վերահսկիչ պալատի նախագահի՝ ազատազրկման դատապարտվելու կամ անգործունակ ճանաչվելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշման հիման վրա:

Ազգային ժողովն այդ առթիվ պատգամավորների ընդհանուր թվի ծայնե- րի մեծամասնությամբ ընդունում է համապատասխան որոշում<sup>11</sup>:

Փաստորեն, Ազգային ժողովին իրավունք է վերապահվում իր որոշմամբ աշխատանքից ազատել Վերահսկիչ պալատի նախագահին: Սահմանադրա- կան բարեփոխումների արդյունքում պետք է այս նորմը փոփոխվի, և ինչպես ՀՀ Սահմանադրական դատարանի անդամների, Կենտրոնական բանկի նա- խագահի համար է սահմանված հատուկ կարգ, այնպես էլ պետք է կարգա- վորվի Վերահսկիչ պալատի նախագահի աշխատանքից ազատումը: Չնայած սահմանադրորեն ազատման նորմը բաց է թողնված, այնուամենայնիվ, կար- ծում ենք, որ պետք է գործի նույն կառուցակարգը՝ ՀՀ Նախագահի առաջար- կությամբ քննարկվի նրա պաշտոնանկության հարցը:

Մեկ այլ կարևոր հարց ևս. որևէ ձևով ամրագրված չէ, թե ում թույլտվու- յամբ է հնարավոր պատասխանատվության ենթարկել վերահսկիչ պալատի նախագահին: Տրամաբանական է, որ եթե այս ինստիտուտի ղեկավարը նշա- նակվում է Ազգային ժողովի կողմից, ուրեմն պառլամենտն էլ պետք է թույլտ- վություն տա նրա նկատմամբ քրեական հետապնդում սկսելու համար: Այս- պես, «Հաշվիչ պալատի մասին» ՌԴ օրենքի 29-րդ հոդվածում ամրագրված է, որ պալատի նախագահին ձերբակալելու, կալանավորելու, քրեական պա- տասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է Պետական Դումայի պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելիի համաձայնությունը: ՀՀ Սահմանադրությամբ՝ պատգամավորներին ներկայացված պահանջները տա- րածվում են նաև Վերահսկիչ պալատի նախագահի վրա:

ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 11-րդ գլուխը, որը նվիրված է պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության քննարկ-

<sup>11</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999 թթ.), Գիրք Ա, Երևան, 1999, էջ 343-344:

մանը և հաստատմանը, որոշակիացնում է Վերահսկիչ պալատի և նրա նախագահի գործառույթները, սակայն կայանալիք սահմանադրական բարեփոխումների ընթացքում այն կարող է վերանայվել:

**ՀՀ Ազգային ժողովի լիազորությունն է ՀՀ Սահմանադրական դատարանի անդամի և Սահմանադրական դատարանի նախագահի նշանակումը:** ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված է. «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»: Նման պետության կայացման երաշխիքը սահմանադրական իրավակարգի և օրինականության հաստատումն է, սահմանադրական իրավանդոների պահանջների կատարումը, իրավական, սոցիալական պետությանը բնորոշ սկզբունքների իրականացումը և անկախ դատական իշխանության գործունեությունը: Այս տեսանկյունից հրամայական է դառնում սոցիալական պետության սահմանադրական մոդելի ստեղծումը: «Հասարակության արժեհամակարգային զարգացումներն ամենից առաջ իրենց արտացոլումն են գտնում երկրի Հիմնական օրենքում, որն արդարացիորեն համարվում է տվյալ ազգի ու ժողովրդի ինքնակենսագրությունը»<sup>12</sup>:

Սահմանադրության պահպանման, դրանից բխող իրավական մյուս ակտերի, միջազգային պայմանագրերի՝ Հիմնական օրենքին համապատասխանությունն ապահովելու, Նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերը լուծելու, Նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտներն անհաղթահարելի կամ վերացած ճանաչելու, Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի մասին եզրակացություն տալու, նրա՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին եզրակացություն տալու, կուսակցությունների գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին օրենքով սահմանված դեպքերում որոշում կայացնելու, ինչպես նաև Սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները դադարեցնելու, նրան ձերբակալելու, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու, համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հիմքերի մասին եզրակացություն տալու լիազորությունները Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացնում է ՀՀ Սահմանադրական դատարանը:

Սահմանադրական դատարանի գործունեության մասին Հ. Խաչատրյանը իրավագիտորեն նշում է. «ՀՀ սահմանադրական դատարանն առանձնահատուկ, առանձնացված տեղ է զբաղեցնում պետական մարմինների, այդ թվում նաև՝ դատական իշխանության մարմինների համակարգում: Այն իրենից ներկայացնում է Հանրապետությունում սահմանադրական վերահսկողության

<sup>12</sup> Str u Constitutions of Europe. Martinus Nijhoff Publishers. LEIDEN-BOSTON, 2004, Vol. I, II:

բարձրագույն մարմին, որն ինքնուրույն և անկախ իրականացնում է դատական իշխանություն՝ սահմանադրական դատավարության միջոցով»<sup>13</sup>:

Սահմանադրության մեջ ամրագրված է, որ Սահմանադրական դատարանը կազմված է ինն անդամից, որից հինգին նշանակում է Ազգային ժողովը, չորսին՝ Հանրապետության Նախագահը (55-րդ հոդվածի 10-րդ կետ և 83-րդ հոդվածի 1-ին կետ): «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքն ընդունվեց 1995 թ. դեկտեմբերին, որով սահմանվեցին ոչ միայն Սահմանադրական դատարանի գործունեության հիմնական սկզբունքները, անդամների իրավասությունները, Սահմանադրական դատարանի նախագահի և տեղակալի գործունեության, դատարանում գործերի քննության սկզբունքները, դատարանի դիմելու կարգը, գործերը քննության ընդունելու կանոնները, գործերի քննության առանձնահատկությունները, այլև՝ Սահմանադրական դատարանի կազմավորման ընթացակարգը, նախագահի և անդամների նշանակման ու լիազորությունների դադարեցման, նրանց ներկայացվող պահանջները, անդամների նյութական ապահովության հարցերը: Ապա 2005 թվականի սահմանադրական բարեփոխումներից հետո, 2006 թվականի հունիսի 1-ին ընդունվեց «Սահմանադրական դատարանի մասին» նոր օրենք: Օրենքի 3-րդ հոդվածում ներկայացված են Սահմանադրական դատարանի անդամին ներկայացվող հետևյալ պահանջները. «Սահմանադրական դատարանի անդամ կարող է լինել 35 տարին լրացած, ընտրական իրավունք ունեցող այն քաղաքացին, որը չունի այլ պետության քաղաքացիություն, ունի բարձրագույն իրավաբանական կրթություն կամ սահմանադրական իրավունքի ոլորտում գիտական աստիճան, ինչպես նաև իրավունքի ասպարեզում առնվազն տասը տարվա աշխատանքային ստաժ և տիրապետում է հայերենին:

Սահմանադրական դատարանի անդամը չի կարող զբաղեցնել պետական այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Սահմանադրական դատարանի անդամը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ»<sup>14</sup>:

Սահմանադրությունն ամրագրում է նաև Սահմանադրական դատարանի անկախության ամենակարևոր երաշխիքները. սահմանադրական դատարանի անդամն անփոփոխելի է ու պաշտոնավարում է մինչև 65 տարին լրանալը: Սահմանադրական դատարանի նախագահը և անդամները նշանակումից հե-

<sup>13</sup> Տե՛ս **Խաչատրյան Հ. Մ.**, Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրությունը, Երևան, 1997, էջ 284:

<sup>14</sup> Տե՛ս [www.arlis.am](http://www.arlis.am):

տո իրենց ողջ գործունեության ընթացքում անկախ են ու գործում են միայն օրենքի շրջանակում, ենթարկվում միայն օրենքին:

Սահմանադրական դատարանի անդամի և դատարանի նախագահի նշանակումը կատարվում է սահմանված ընթացակարգով: Այսպես, Ազգային ժողովն իր նախագահի առաջարկությամբ նշանակում է Սահմանադրական դատարանի հինգ անդամ և Սահմանադրական դատարանի կազմից՝ Սահմանադրական դատարանի նախագահ: Սահմանադրական դատարանի կազմավորումից հետո երեսնօրյա ժամկետում Ազգային ժողովի կողմից Սահմանադրական դատարանի նախագահ չնշանակվելու դեպքում Նախագահն է նշանակում Սահմանադրական դատարանի նախագահին (55-րդ հոդվածի 10-րդ կետ, 83-րդ հոդվածի 2-րդ կետ): Այս հոդվածներում ներառված է հակակշիռների կառուցակարգ, որի համաձայն պետական իշխանության մի մարմնին վերապահված չէ սահմանադրական արդարադատություն իրականացնող բարձրագույն մարմնի կազմավորման ողջ լիազորությունը: Մյուս կողմից՝ կարևոր է, որ սահմանափակված են պառլամենտի լիազորությունները՝ Սահմանադրական դատարանի նախագահի նշանակման ժամկետի հետ կապված: Չի բացառվում, որ քաղաքական տարբեր շարժառիթներով, անհամաձայնության պատճառով Սահմանադրական դատարանի նախագահի հարցը Ազգային ժողովը չկարողանա լուծել. այդ դեպքում Սահմանադրությամբ տրված է հստակ լուծում. ԶՅ սահմանադրական դատարանի ղեկավարի խնդիրը մեկ ամսվա ընթացքում Ազգային ժողովի կողմից չլուծվելու դեպքում՝ այդ գործառույթը փոխանցվում է ԶԶ Նախագահին: Հատկանշական է, որ, ի թիվս Ազգային ժողովի կողմից նշանակվող պաշտոնատար անձանց, Սահմանադրական դատարանի անդամների նշանակման և հրաժարականի կամ լիազորությունների վաղաժամկետ դադարեցման կարգը նույնպես սահմանված է Կանոնակարգով: «Ազգային ժողովին վերապահված հարցերի քննարկման ընթացակարգերը» վերնագրով 13-րդ գլխում նկարագրված է պաշտոններում առաջադրվելու և նշանակվելու ողջ գործընթացը. Սահմանադրական դատարանի անդամի նշանակումը կատարվում է Սահմանադրության և Կանոնակարգի համաձայն. այդ պաշտոնում յուրաքանչյուր թեկնածու իր գործունեության մասին ծրագրով հանդես է գալիս Ազգային ժողովում: Վերջինիս կողմից Սահմանադրական դատարանի անդամի, դրա նախագահի ընտրության մասին որոշումն ընդունվում է գաղտնի քվեարկությամբ:

ԶԶ Սահմանադրության 55-րդ հոդվածի 10-րդ կետի 2-րդ մասի և 83-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա Նախագահը և Ազգային ժողովը կարող են դադարեցնել

Սահմանադրական դատարանի՝ իրենց նշանակած անդամի լիազորությունը կամ համաձայնություն տալ նրան որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ: Սահմանադրական այս նորմը, կարծում ենք, պետք է տարածվի նաև այն բոլոր պաշտոնյաների վրա, որոնց պաշտոնն ամրագրված է Սահմանադրությամբ և, որոնք նշանակվում կամ ընտրվում են Ազգային ժողովի կողմից:

Միաժամանակ ողջունելի է, որ սահմանադրական բարեփոխումներն ընդլայնեցին Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների շրջանակը՝ չորսից դարձնելով ինը սուբյեկտ: Միաժամանակ, սահմանադրորեն ավելացվել են Սահմանադրական դատարանի գործառույթները, որն անկախություն ձեռքբերած երկրի սահմանադրաիրավական պրակտիկայում լուրջ առաջընթաց է:

**Կարևոր է նաև Ազգային ժողովի կողմից Մարդու իրավունքների պաշտպանի նշանակման լիազորությունը:**

Հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աշխարհի առաջադեմ երկրներում տարածում գտավ Մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմենի) ինստիտուտը, որի հայրենիքը Շվեդիան է: Օմբուդսմենի գործունեությունը միտված է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը: Ներկայումս ավելի քան 90 երկրում գոյություն ունեն օմբուդսմենի գործառույթներն իրականացնող 150 տարբեր մարմիններ և կառույցներ<sup>15</sup>: Սակայն կան նաև երկրներ (Նորվեգիա, Շվեդիա), որոնք ավելի առաջ գնացին ու այս ինստիտուտին վերապահեցին օրինականության և վարչակազմի գործունեության նկատմամբ վերահսկողության լիազորություններ:

«Հիմնարար իրավունքների մասին եվրոպական Միության խարտիայի» 43-րդ հոդվածում նշված է. «Միության յուրաքանչյուր քաղաքացի կամ քաղաքացուի կամ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն ապրում է անդամ պետությունում կամ այնտեղ ունի իրավաբանական հասցե, իրավունք ունի բողոքով դիմել Միության օմբուդսմենին այն դեպքերում, երբ ներպետական ու համայնքային ինստիտուտների ու ատյանների գործողությունների ընթացքում թույլ են տրվել կառավարման կանոնների խախտումներ, բացառությամբ Դատարանի և Առաջին ատյանի տրիբունալի, երբ նրանք իրականացնում են իրենց գործառույթները»<sup>16</sup>:

<sup>15</sup> Տես **Зеленцов А. Б.**, Контроль за деятельностью исполнительной власти в зарубежных странах, М., 2002, էջ 50:

<sup>16</sup> Տես **Հարությունյան Ա. Շ.**, Եվրոպական Միություն, Երևան, 2005, էջ 441:

Մեր երկրում այս ինստիտուտը սահմանադրորեն ամրագրված չէր: 2001 թվականին Եվրոպայի խորհրդին անդամակցելուց հետո Հայաստանի Հանրապետությունը ստանձնեց մի շարք պարտավորություններ, որոնցից մեկը վերաբերում էր Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի հիմնմանը:

2004 թվականից Հայաստանում գործում է Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը՝ «Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի համաձայն<sup>17</sup>: Օրենքն ամրագրեց Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը, սահմանեց Պաշտպանի գործունեության սկզբունքներն ու կառուցակարգերը<sup>18</sup>:

2005 թվականի Սահմանադրության փոփոխությունների արդյունքում Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտն ամրագրվեց սահմանադրորեն. ավելացավ 83.1-րդ հոդվածը, որը վերաբերում է Մարդու իրավունքների պաշտպանին և նրա նշանակման կառուցակարգին: Դա միակ պաշտոնն է, որի դեպքում Սահմանադրությունն ամրագրում է, որ պետք է ընտրվի հասարակության մեջ բարձր հեղինակություն վայելող անձը: Պաշտպանը ոչ միայն դարձավ սահմանադրական մարմին, այլև ամբողջապես անկախացավ գործադիր մարմնից: Հատկանշական է, որ Հայաստանում Մարդու իրավունքների առաջին պաշտպանին նշանակել է Նախագահը՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի համաձայն: Իսկ ըստ բարեփոխված Սահմանադրության՝ «Ազգային ժողովը Մարդու իրավունքների պաշտպանին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ծայրերի առնվազն երեք հինգերորդով՝ վեց տարի ժամկետով» (83.1-րդ հոդվածի 1-ին մաս): Այս նորմը սկզբունքորեն նշանակում է, որ, բացի պառլամենտական մեծամասնությունից, անհրաժեշտ է նաև ընդդիմության, անկախ պատգամավորների համաձայնությունը: Սա միակ դեպքն է, երբ հնարավոր է, որ պառլամենտի որոշման վրա ազդի նաև ընդդիմությունը: Այսպիսով՝ հասարակության մեջ առավել մեծ հեղինակություն վայելող անձը միայն կարող է ընտրվել Մարդու իրավունքների պաշտպան: Այս ինստիտուտի սահմանադրական ամրագրումը, ժողովրդի ներկայացուցիչների կողմից նրա նշանակումը կարևոր առաջընթաց է պառլամենտական ժողովրդավարության ապահովման գործում:

Հայաստանում մարդու իրավունքների երաշխավորված պաշտպանությանը մեծապես կարող է նպաստել Ազգային ժողովի կողմից Մարդու իրավունքների պաշտպանի ճիշտ ընտրությունը: Դա բավական բարդ գործընթաց է: Մարդու իրավունքների պաշտպանին սահմանադրորեն տրված է պետական

<sup>17</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 2003, N 58, էջ 3-13:

<sup>18</sup> Նույն տեղում:

և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանության լիազորություն: Վերջիններս պարտավոր են աջակցել Պաշտպանին և ոչ թե խոչընդոտել նրա գործունեությունը:

Ժողովրդավարական պետություններում մարդն իր արժանապատվությամբ, իրավունքներով և ազատություններով ճանաչվում է որպես բարձրագույն արժեք: Մարդու իրավունքները, սահմանադրորեն սահմանափակելով պետական իշխանությունը<sup>19</sup>, պայմաններ են ստեղծում Պաշտպանի ազատ ու անկաշկանդ գործունեության համար: Սակայն իրականությունն այլ է հատկապես անցումային փուլում գտնվող և ոչ զարգացած ժողովրդավարությամբ երկրներում, որտեղ հաճախ են ոտնահարվում մարդու իրավունքներն ու ազատությունները, և որտեղ իշխանությամբ օժտված սուբյեկտն «ամենակարող» է: Մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները սահմանված են ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխում, որի 18-րդ հոդվածի 3-րդ մասը հռչակում է, որ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով ստանալու Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը»: Ակնհայտ է, որ այդ ինստիտուտը պետք է անկախ լինի պետական իշխանության մարմիններից և ծառայի մարդկանց իրավունքների պաշտպանությանը, թույլ չտա պաշտոնյայի, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մարդու և քաղաքացու իրավունքների խախտումներ, իր լիազորությունների շրջանակում աջակցի մարդկանց:

ՀՀ Սահմանադրության 83.1-րդ հոդվածը Մարդու իրավունքների պաշտպանին գործելու լայն հնարավորություններ է ընձեռում՝ ամրագրելով, որ՝

1. նա անփոփոխելի է,
2. անկախ պաշտոնատար անձ է,
3. անձեռնմխելի է, ինչպես Ազգային ժողովի պատգամավորը,
4. պաշտպանում է մարդուն, աջակցում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց կողմից նրա խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնմանը,
5. նշանակվում է վեց տարով, ինչն անկախություն է ապահովում տվյալ գումարման Ազգային ժողովից,
6. նրա գործունեության մյուս երաշխիքները սահմանվում են օրենքով:

<sup>19</sup> Տե՛ս **Четвернин В. А.**, Понятия права и государства // Введение в курс теории права и государства, М., 1997, էջ 26: Մամրամասն տե՛ս նաև **Ատոմյան Մ.**, Մարդու իրավունքները քո իրավունքներն են, Երևան, 2004:

Վերոգրյալի հաշվառմամբ էլ վերանայվեց ու փոփոխվեց Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքը, որում հաշվի առնվեցին ինչպես Սահմանադրության պահանջները, այնպես էլ նոր իրողությունները, Մարդու իրավունքների պաշտպանի և այդ ինստիտուտի գործունեության փորձը:

**Սահմանադրորեն նախատեսված է նաև Ազգային ժողովի՝ Հեռարձակվող լրատվության միջոցները կարգավորող անկախ մարմնի անդամների նշանակման լիազորությունը:** Սահմանադրությունը մարդուն տալիս է տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատություն՝ տեղեկատվության ցանկացած միջոցով: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը<sup>20</sup> յուրաքանչյուր անձի հնարավորություն է ընձեռում ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և դա ստանալու նպատակով դիմելու տեղեկատվություն տնօրինողին, որն էլ անհապաղ և մատչելի ձևով տրամադրում է այն, եթե օրենքում այլ բան նախատեսված չէ: Տեղեկատվության ազատությունը ժողովրդավարական պետությունների կայացման հիմնարար սկզբունքներից է, և պատահական չէ, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականում [Rec (2000)2] նախատեսված է, որ «Անկախ պետությունները պետք է երաշխավորեն յուրաքանչյուրի իրավունքը՝ հայտ ներկայացնելու պայմանով հասու լինել պետական իշխանությունների մոտ պահվող պաշտոնական փաստաթղթերին: Այս սկզբունքը պետք է կիրառվի առանց որևէ (այդ թվում՝ ազգային պատկանելության) հիմքով խտրականության»<sup>21</sup>: Եվրախորհրդի՝ «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ» հանձնարարականում նշված է. «Պետական իշխանությունը պետք է իր սեփական նախաձեռնությամբ իրականացնի անհրաժեշտ միջոցառումներ իր մոտ պահվող պետական տեղեկատվության հրապարակման ուղղությամբ, երբ նշված տեղեկությունների տրամադրումը հանրային կառավարման թափանցիկությանը կամ վարչակարգերի ներսում արդյունավետությանը նպաստելու համար կարևոր նշանակություն ունի, կամ խրախուսական կլինի հանրային նշանակության խնդիրների լուծմանը հասարակության գիտակցված մասնակցությունը խթանելու համար»<sup>22</sup>:

Մեր երկրում ժողովրդավարության զարգացմանը, օբյեկտիվ լրատվություն ստանալուն և հեռուստաընկերությունների անկախությանը նպաստող գործոն են հեռարձակման ոլորտի անկախ կարգավորող մարմնի մասին սահ-

<sup>20</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու, Գիրք Զ, Երևան, 2003, էջ 163-169:

<sup>21</sup> Տե՛ս [www.wcd.coe.int/ViewDoc](http://www.wcd.coe.int/ViewDoc):

<sup>22</sup> Տե՛ս **Դոյդյան Շ.**, Տեղեկատվության ազատության իրավական կարգավորումը, էջ 18-19, Մանրամասն տե՛ս նաև Տեղեկատվության ազատությունը Հայաստանում, Երևան, 2003:

մանադրական նորմը և նրա ձևավորման կարգը, որն ամրագրված է Սահմանադրության 83.2-րդ հոդվածում: Ազգային ժողովը, ինչպես նաև ՀՀ Նախագահը հավասար թվով անդամներ են նշանակում և ձևավորում այդ մարմինը՝ վեց տարի ժամկետով:

Այսպիսով՝ Հայաստանում գործում է սահմանադրական կառույց՝ հեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովման նպատակ ունեցող անկախ կարգավորող մարմին, որն ունի նաև լրատվության ազատությունը, անկախությունը և բազմակարծությունն ապահովելու խնդիր: Ժողովրդավարացման կարևոր չափանիշներից է մարդուն տեղեկատվության տրամադրումը, ինչպես նաև ցանկացած տեղեկատվություն ազատորեն ստանալու հնարավորության ընձեռումը, բացի օրենքով սահմանված գաղտնիք պարունակող նյութերից: Հայաստանի Հանրապետության օրենքը կարգավորել է այս իրավահարաբերությունները: Ակընհայտ է, որ վերջին ժամանակներս մարդիկ տեղեկատվություն են ստանում ոչ միայն տպագիր, այլև էլեկտրոնային մամուլի, հեռարձակվող լրատվության միջոցներով: Տպագիր մամուլի տպաքանակը մեծ չէ, առկա է տարածման դժվարություն, մյուս կողմից էլ սոցիալական բարդությունները ևս խանգարում են դրա ձեռքբերմանը: Մինչև մամուլը հասնում է տարածքներ, տեղեկատվությունը հնանում է: Հետևաբար, հուսալի և օպերատիվ տեղեկատվության աղբյուր է հեռարձակվող լրատվությունը: «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքը<sup>23</sup> կարգավորում է անկախ մարմնի ստեղծումը: Գործող օրենսդրությունը նման փորձ արել էր, սակայն այդ մարմինը ձևավորվել էր իշխանության մեկ մարմնի կողմից: Ուստի, անկախ այն բանից, թե ինչպիսի աշխատանքներ էր կատարում, միևնույն է՝ դրա գործունեությունը հասարակության կողմից զնահատվում էր որպես ոչ անաչառ: Ստեղծված իրավիճակը շտկելու, սոցիալական լարվածությունը թուլացնելու, մարմնի անկախությունն ապահովելու նպատակով Սահմանադրության 83.2-րդ հոդվածը սահմանում է այդ մարմնի ձևավորման կարգը: Իշխանության թևերի հավասարակշռության նոր մոտեցում է այն, որ հեռարձակվող լրատվության միջոցները կարգավորող անկախ մարմնի անդամների կեսն ընտրվում է Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս կեսին նշանակում է Հանրապետության Նախագահը: Անկախության ապահովման ևս մեկ դրսևորում է այն, որ այս մարմինը ձևավորվում է 6 տարի ժամկետով: Ազգային ժողովի

<sup>23</sup> Տես Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու, Գիրք Ե, Երևան, 2002, էջ 47-60:

կողմից ընտրված անդամները պետք է վայելեն նրա մեծամասնության վստահությունը և ընտրվեն պատգամավորների ընդհանուր թվի ծայների մեծամասնությամբ:

**Անդարադառնաճ Ազգային ժողովի կողմից Արդարադատության խորհրդի երկու իրավաբան-գիտնականների և գլխավոր դատախազի նշանակման լիազորություններին:** Մեր երկրում կայանալիք սահմանադրական բարեփոխումները միտված են ՀՀ Սահմանադրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն, իշխանության ճյուղերի լիազորությունները հստակեցնելուն: Դրանք էապես նպաստելու են նաև արդարադատության համակարգի անկախության ապահովմանը: Ավելի իրական հնարավորություններ են ստեղծվելու իշխանությունների տարանջատման, հակակշիռների և զսպունակների կառուցակարգերը կիրառելու առումով:

Արդարադատության խորհրդին տրված լիազորությունները, նրա ձևավորման կարգը պայմաններ են ստեղծում գործադիր իշխանությունից Արդարադատության խորհրդի անկախ գործունեության համար: Այլևս ՀՀ Նախագահը չի հանդիսանում Արդարադատության խորհրդի նախագահը, դատական մարմինների անկախության երաշխավորը: Սահմանադրության համաձայն՝ «Արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում են ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կողմից զաղտնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով օրենքով սահմանված կարգով ընտրված ինը դատավորներ, Նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան-գիտնականներ» (94.1 հոդվածի 2-րդ մաս): ՀՀ Սահմանադրության 83-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ Ազգային ժողովն ընտրում է Արդարադատության խորհրդի երկու իրավաբան-գիտնականների: Այսինքն, Ազգային ժողովը և Հանրապետության Նախագահն ունեն հավասարաչափ մասնակցություն Արդարադատության խորհրդի ձևավորման գործում:

Իրավական պետության կայացման, իրավունքի գերակայության ապահովման համար անառարկելի է նաև Հանրապետության դատախազության դերը: 1995 թ. Սահմանադրությամբ գլխավոր դատախազի նշանակման գործում Ազգային ժողովը որևէ մասնակցություն չունե: 2005 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում Հիմնական օրենքի 103-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընդլայնվել են Ազգային ժողովի լիազորությունները, և հավասարակշռության սկզբունքը կիրառվել է նաև այս պաշտոնի նշանակման դեպքում: ՀՀ Նախագահի առաջարկությամբ (Սահմանադրության 55-րդ հոդվածի 9-րդ կետ) Հանրապետության գլխավոր դատախազին նշա-

նակում է Ազգային ժողովը՝ 6 տարի ժամանակով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել գլխավոր դատախազ: Սահմանադրությունն ամրագրում է նաև գլխավոր դատախազի պաշտոնանկության ինստիտուտը (103-րդ հոդվածի 3-րդ մաս), որի համաձայն Նախագահի առաջարկությամբ օրենքով սահմանված դեպքերում Ազգային ժողովը կարող է գլխավոր դատախազին պաշտոնանկ անել:

Այսպիսով՝ Ազգային ժողովը, իրացնելով պետական պաշտոններում և անկախ ինստիտուտներում նշանակումներ կատարելու մասին իր սահմանադրական լիազորությունները, անմիջական մասնակցություն է ունենում համապատասխան մարմինների ձևավորման գործում, միաժամանակ, հակակշռում պետական իշխանության մյուս ճյուղերին՝ նպաստելով ժողովրդավարական սկզբունքների կենսագործմանը, պետական ու անկախ մարմինների պաշտոնատար անձանց սահմանադրական պատասխանատվության բարձրացմանը:

*Բանալի բառեր - օրենսդիր մարմին, սահմանադրական լիազորություն, պաշտոն, Կենտրոնական բանկ, Վերահսկիչ պալատ, գլխավոր դատախազ, Սահմանադրական դատարան, մարդու իրավունքների պաշտպան, Արդարադատության խորհուրդ, կարգավորող մարմին*

## THE AUTHORITY OF THE NATIONAL ASSEMBLY OF THE REPUBLIC OF ARMENIA TO MAKE APPOINTMENTS TO POSITIONS

**H. H. HAKOBYAN**

*Doctor of Law, Professor,  
RA Minister of Diaspora,  
President of the GSU Council*

As the highest representative and legislative body of the state power, the National Assembly of the Republic of Armenia has the authority to make appointments to important positions.

This article is devoted to the constitutional powers of the RA National Assembly in regard to making appointments to key positions in government and independent bodies. In particular, it discusses the institutions of making

appointments to the following positions by the RA National Assembly on the recommendation of the RA President: the Chairman of the RA Central Bank, the President of the Chamber of Control, the Chairman and five members of the RA Constitutional Court, the two lawyer-scientists of the Council of Justice, the Prosecutor General, Ombudsman, members of the independent body to regulate broadcasting mass media.

## **ПОЛНОМОЧИЕ НАЦИОНАЛЬНОГО СОБРАНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ НА НАЗНАЧЕНИЯ ДОЛЖНОСТЕЙ**

**Г. Г. АКОПЯН**

*Доктор юридических наук, профессор, Министр диаспоры РА,  
Председатель совета ГГУ*

Национальное Собрание Республики Армения, как высший представительный и законодательный орган государственной власти, наделено полномочием осуществлять назначения на важные должности.

Статья посвящена конституционному полномочию Национального Собрания РА по назначению на ключевые государственные посты и в независимые органы.

В частности, рассматривается институт назначений со стороны Национального Собрания и по рекомендации Президента РА на должности: председателя Центрального банка РА, председателя Контрольной палаты РА, председателя и пяти членов Конституционного Суда, двух ученых - юристов Совета юстиции, Генерального прокурора, Защитника по правам человека, членов независимого органа, регулирующего средства массовой информации.